ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ << ԳՀՊԸԱՇՁԲ-2016/3 >>
ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԻՍՏ N 3

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԹԻՎ 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Գառնի «13» «մայիսի» 2016 թվականի

ժամը 10:00

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ
<<ԳՀՊԸԱՇՁԲ-2016/3>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներ և քարտուղարը

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Վարդանյան |
| Անդամներ | Վ. Հովհաննիսյան |
| | Վ. Լևոնյան |
| | Ռ. Սարիբեկյան |
| | Ս. Հարությունյան |
| | Ռ. Հովհաննիսյան |
| Քարտուղար | Լ. Թադևոսյան |

Գրությամբ իրազեկված <<Էդ-Շին>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը նիստին չներկայացավ
Նիստը կայացավ համայնքի ղեկավարի աշխատասենյակում:
Նիստը բացեց և օրակարգի շուրջ զեկուցով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Վարդանյանը, այնուհետև ելույթ ունեցավ հանձնաժողովի քարտուղար Լ. Թադևոսյանը, որը մասնավորապես նշեց, որ ընթացակարգով հրավերի վերաբերյալ պարզաբանումներ չեն ներկայացվել: Հայտերի բացման նիստում առաջին տեղ զբաղեցնող մասնակից <<Էդ-Շին>> ՍՊԸ-ին օրենքով սահմանված ժամկետում գրություն է ուղարկվել հայտը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ համաձայն <<Կարգ>>-ի 47 կետի 2-րդ ենթակետի, բացի այդ առաջարկվել է լրացուցիչ հիմնավորումներ ներկայացնել չհիմնավորված ցածր գնիայի առաջարկի վերաբերյալ <<Կարգ>>-ի 47 կետի 3-րդ ենթակետի համաձայն:
Հարցում է ուղարկվել նաև ֆին նախարարություն:
11.05.2016թ. ստացվել է համապատասխան եզակացություն: Նույն օրը ստացվել է նաև <<Էդ-Շին>>-ի կողմից հայտը հիմնավորող փաստաթղթերի փաթեթը 16 թերթից:
Հիմնավորումների փաթեթը, Ֆին նախարարության եզրակացություն և երկուական գնահատման թերթիկներ ներկայացվել են հանձնաժողովի անդամներին եզրակացություն ներկայացնելու համար:
Փաստաթղթային ուսումնասիրության արդյունքում պարզվել է